



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

3233

28

2-22

1880



254

ԶԱՅՆ

“ Թե որ մեկը ասոնց վրայ աւելցընէ , Աստուած անոր վրայ պիտի աւելցընէ ան հարուածները որ աս գրքիս մեզ գրուած են , եւ քեոր մեկը աս մարգարեաւթեանս գրքին խօսքերէն պակսեցընէ , Աստուած անոր բաժինը պիտի պակսեցընէ կենաց ծառէն եւ սուրբ քաղաքէն որ աս գրքիս մեզը գրուած են : , Յայտ. ԻԱ. 18, 19 :



28
—
2-22

Կ. ՊՕԼԻՍ

ՏՊԱԳՐ. Յ. Մ. ՄԱՆՈՒԿԵԱՆ

1880

2010

33004

28
2-22 uf



2012

ՉԱՅՆ

“Թե որ մեկը առնց վրայ աւելցընէ, Աստուած անոր վրայ պիտի աւելցընէ ան հարուածները որ աս գրքիս մեզ գրուած են, եւ բեր մեկը աս մարգարեութեանս գրքին խօսքերէն պակսեցընէ, Աստուած անոր բաժինը պիտի պակսեցընէ կենաց ծառէն եւ տարը քաղաքէն որ աս գրքիս մեզը գրուած են:”, Յայտ. ԻԱ. 18, 19:

559
39

Գ Գ Գ Գ
Գ Գ Գ Գ Գ Գ Գ Գ

Կ. ՊՕԼԻՍ

Ի ՏՊԱՐԱՆԻ Յ. Մ. ՄԱՆՈՒԿԵԱՆ



2001

ԶԱՅՆ



« Թե որ մեկը ասանց վրայ աւելցընէ , Աստուած անոր վրայ պիտի աւելցընէ ան հարուածները որ աս գրքիս մեզ գրուած են , եւ բէ որ մեկը աս մարգարեութեան գրքին խօսքերէն պակսեցընէ , Աստուած անոր բաժինը պիտի պակսեցընէ կենաց ծառէն եւ սուրբ քաղաքէն որ աս գրքիս մեզ գրուած են : , Յայտ ԻԱ. 18 , 19 .

Խիստ ցաւալի եւ միանգամայն անուրանալի իրողութիւն մի է , որ Քրիստոնեայ ազգաց եւ ժողովրդաց մէջ զանազան հարանուանութեամբ զանուած բազմաթիւ բաժանումները թէ Քրիստոնէական սուրբ կրօնքին ակարութեանը պատճառ եւ թէ հեթանոսաց դարձի դալուն եւ Քրիստոնէութիւնը ընդունելուն մեծ արգելք եղած է :

Մեր “ Զայնը ” ուրախութեամբ կը բարձրացընեմք բոլոր աշխարհի առջեւ եւ մանաւանդ մեր սիրելի ազգին այս աւետիսը տալու թէ Տէրը իր նախախնամութեամբը Ամերիկայի Միացեալ Նահանգաց մէջ հզոր եւ բազմաթիւ ժողովուրդ մը հանած է որոնք հաւատալով թէ Քրիստոնէից մէջ զանուած բաժանումները Յիսուս Քրիստոս մեր Տիրոջը հոգւոյն համաձայն չէ , եւ “ Ես Պօղոսեան եմ ” , եւ մեկալը թէ Ապօղոսեան եմ ” ըսելը “ մարմնաւոր է ” , եւ թշնամի Աստուծոյ ժողովուրդին միութեանը , կը հրաւիրեն բոլոր աշխարհիս քրիստոնեայները որ մեկզի ձգեն մարդկային բոլոր խառնուրդները իրենց Քրիստոնէական սուրբ կրօնքէն , եւ սուրբ գրոց սովորեցուցած պարզ ճշմարտութիւններովը միանալով ամենահզոր բանակ մը կազմեն աշխարհիս մէջ , այս ժողովուրդը կը կոչուին

« ՔՐԻՍՏՈՍԻ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԸ ԿԱՄ ՔՐԻՍՏՈՆԵԱՅԻ »

Այս կրօնական ժողովուրդը նաև կը կոչուին “ Քրիստոսի Եկեղեցին ” , “ Աստուծոյ Եկեղեցին ” , եւ “ Քրիստոնեայ Եկեղեցին ” , քանզի աս անունները սուրբ գիրքէն են , “ Աստուծոյ Եկեղեցին ” , եւ “ Քրիստոսի Եկեղեցին ” ճիշտ սուրբ գրոց լեզուն է : (Տես Ա. Կոր. Ա. 2. եւ Զուգլմ. ԺԶ. 16)

Անոնք բոլոր մարդկային անունները եւ սուրբ գրոց համեմատ չեղած տխորոնները չեն ընդունիր , ինչու որ մարդկային անունները եւ տխորոնները բաժանումներ կը յառաջացընեն եւ կը յարատեւեն . Անոնք երկնից մէջ բաժանումներ չեն ակնկալեր եւ թախանձանօք կը պնդեն թէ աս աշխարհիս մէջ նաև Աստուծոյ ժողովուրդին մէջ բաժանումներ ըլլալու չէ : (Տես Յովն. ԺԷ. 20. եւ Ա. Կոր. Ա. 10)

Բոլոր քրիստոնէից միութեանը համար անոնք եղբայրական սիրով կառավարիւն սուրբ գրոց խօսքերով եւ ոճերով բացայայտել սուրբ գրոց ճշմարտութիւնները , եթէ բոլոր Քրիստոնէական կրօնքին ուսուցիչները ճշգիւ սուրբ գրոց լեզուն գործածեն , զգուշանալով որ չի խուսափեն օրինակելէ այնպիսի վկայութիւններ որ իրենց դէմ կը համարուի , եւ ուրիշ վկայութեանց յաճախ գործածուելուն աչառու չի լինին , ուսանողներուն ամէնքն ալ նման դասեր եւ ազատօրութիւններ կընդունին , եւ բոլոր մարդկային խառնուրդները եւ հերձուածողական գաղտխարներ որ հիմայ Աստուծոյ ժողովուրդին մէջ բաժանման պատեր եղած են , շուտով կանհետանան , եւ միարանելով Քրիստոնէութիւնը կը զօրանայ եւ կը յաղթանակէ իր բոլոր թշնամեացը դէմ :

“ Քրիստոսի Աշակերտները ” ս ե իցէ մարդկային խառնութեան իմաստը կամ հաւատոյ դաւանութիւն գործածելը կը մերժեն , որովհետեւ այսպիսի դաւանութիւնները հերձուածողական , հերետիկոսական , եւ Քրիստոնէական ազատութեան կործանիչ եւ աշխարհը Քրիստոնէութեան գառնալու արդեւր եղան , մանաւանդ որ պիտանաւորութիւն չունին , ինչու որ կը հաւատամք եւ կընդունին թէ սուրբ գիրքը անսխալ է , եւ փրկութեան պիտանի եղած ամէն բան կը սրբաւանակէ : Տես Ի. Երմ. Գ. 16 .

Աստուածաշունչն է միմիայն հիմը որուն վրայ կը ջանան հաստատել բոլոր Քրիստոնէից միութիւնը , եւ կը փութան հաւատացեալի անհաւան մասերուն մէջ միութիւն , գաղափարաց մասերուն ազատութիւն եւ ամէն բանի մէջ սէր ունենալ , հաւատոյ եւ գաղափարաց մէջ տեղը կը տարփերեն անոնք , եւ քանի որ հաւատքով մեկ են , գաղափարաց տարբերութիւնը եր-

բէք միութեան արդեւ չեն համարիր, Տես Հռովմ. ժԳ, 1 իրենց ջանքը է խօսիլ երբ և ինչ բանի վրայ որ Աստուածաշունչը կը խօսի, և լուել երբ և ինչ բանի վրայ որ Աստուածաշունչը լուս կեցած է, և այս կերպով արդեւ չի ֆրիստոնէից միութեան և աշխարհի դարձի գալուն առջեւ եղած դժուարութիւնները :

“Միութեան մէջ զօրութիւն կայ” բոլոր թշնամիք վանելու և յաղթանակն ստանալու, և մասնաւորապէս ճշմարտ է այս երբ այդ միութիւնը Աստուծոյ յաւիտենական ճշմարտութեանը վրայ հիմնուած է. “Միութեամբ հաստատ եմք, բաժանմամբ անկեալ” օգտակար առած մի է թէ եկեղեցւոյն և թէ աշխարհի մէջ, Հռովմէականը շատուր են և միացեալ և իրենց դրութիւնը անհաշտ թշնամի մ’է քրիստոնէութեան :

Անհաւատութիւնը կը միացնեն իր զօրքը Աստուծոյ ճշմարտութեանը դէմ, և անկրօնութիւնը կարիանայ և իր զօրութեան աղետաւոր տարերքներն կը կազմակերպէ Սուրբ գրոց անարատութեանը և ճշմարտութեանը դէմ, արդեօք արժան է որ մենք քրիստոնէայքս ազանգներու և հակառակ մասերու բաժնուէմք և մեզի սիրելի բայց անկենդան գաղափարայ պատճառաւ, ներքին պատերազմներով վտանմամբ մեր զօրութիւնը, քանի որ մեր թշնամիները կը միանան և մեր գործքերը կը պաշարեն :

“Քրիստոսի աշակերտները” շատ բանտարկուեցան անտեղեակ և նախապաշարեալ մարդոց ձեռամբ, որոնք առանց լսելու գտտապարտեցին զանոնք. իրենց հաւատքին և արարողութեանցը մէջ “Աշակերտները” ուղղափառ են, և այս իրողութիւնը ընդունուած է մինչեւ անդամ իրենց այն հակաակորդներէն որոնք առանց նախապաշարման յարմար միջոցներով իրենց վրայ անդեկութիւն ստացած են :

Անոնք կը քարոզեն սրտի փոփոխութիւն Յիսուս Քրիստոսի վրայ հաւատալով, վարաց փոփոխութիւն առ Աստուած ապաշխարութեամբ, վիճակայ փոփոխութիւն քրիստոսի մահուանը եւ մարմնոյն մկրտութեամբ : Տես Յովն. Գ. 5. Հռովմ. 2. 1-6 կադ. Ա. 12. և Երբ. Ժ. 22

Կրնդունին անոնք թէ քրիստոնէական մկրտութիւնը “Մեղաց թողութեան համար է” թէ որ հաւատքի և Ապաշխարութեան արդիւնքն է, “Ան որ կը հաւատայ և կը մկրտուի պիտի վերկուի”, Տես Մարկ. ԺԶ. 16 “Ապաշխարեցէք և ձեզմէ ամեն մէկը թող մկրտուի Յիսուսի Քրիստոսի անունովը մեզաց բողոքեան համար և պիտի ընդունիք Սուրբ հոգիին պարզ ևը” Տես Գործ. Բ. 38

Բայց երախայները չեն մկրտեր, նախ որ սուրբ գիրքը անոր վրայօք բան մը չըսեր, երկրորդ՝ որովհետեւ երախայից մկրտութիւնը առանց հաւատքի, ապաշխարութեան, կամ սրտի փոփոխման, կամ հոգիին, կամ իրենց կամացը լինելուն անոնց օգուտ չի կրնար ընել, երրորդ՝ որովհետեւ երախայք կարօտ չեն այսպիսի արարողութեան մը քանզի արդէն “Աստուծոնէն է երկնից Թագաւորութիւնը”

Աշխարհի մէջ չի կայ ժողովուրդ մը որ “Քրիստոսի Աշակերտներէն” աւելի հաստատ կերպով հաւատայ Տէր Յիսուս Քրիստոսի Աստուածութեանը, և անոնցմէ աւելի փառաւորէ մարդոց փրկիչը, ու զԱստուած սիրելը և Անոր պատուիրանքները պահելը “Սուրբ քաղաքին դռներէն ներս մտնելու համար անոնցմէ աւելի կարելու համարի. Տես Յայտ. ԻԲ. 14

“Քրիստոսի Աշակերտները” կը հաւատան թէ մեր Տէրօջը աշակերտները “մէկ շաբթի օրերը երբ մեկտեղ կուգային իրենց Տէրօջը հրամանին հնազանդելով “Հայ կարելով” զինքը կը յիշէին և Անոր մահը կը պատմէին Տես Գործ. Բ. 42. Ի. 7. Ղուկ. ԻԲ. 19, և Ա. Կոր. ԺԱ, 26, և իրենք ալ Քրիստոնէական անհրաժեշտ պարտաւորութիւն համարելով երբ “մեկ աբթի” օրերը մեկտեղ կը հաւաքին Տէրօջը մահը յիշելով Անոր ընթրիքը կը կատարեն :

Անոնք հաւատար կաշեւորութեամբ կրնդունին հաւատքը, ապաշխարութիւնն, քրիստոս դաւանելը, Մկրտութիւնը, Տէրօջը անունը կանգելը, առօքը, առանին եւ ժողովրդական պաշտամանքը, բարեխրութիւնը, եւ քրիստոնէական անտեսութեան բոլոր պատուիրանաց կատարումը եւ բնաւ չեն քարոզեր կամ ընդունիլ թէ ոմանք եպիսկոպոս են և ոմանք չեն, թէ եւ զԱստուած սիրելը եւ Անոր պատուիրանքները պահելը ամենահրաժեշտ պարտաւորութիւն կը

համարին, բայց երբէք չեն յուսար թէ իրենց հնազանդութեամբը կամ բարի վարմունքովը կրնան փրկութեան արժանանալ :

Իրենց փրկութիւնը կը սեպհականեն Աստուծոյ շնորհքին իբրեւ սկզբնատիպ շարժողական պատճառ , Անեղծանելի բանին կամ Աւետարանին իբրեւ գործիւնոր պատճառ , եւ Հաւատոյ ու հնազանդութեան , իբրեւ գործակից պատճառ մարդու հոգւոյն փրկութիւնը բոլոր այս միջոցներովը կատարել կընդունին եւ ո՛չ թէ միայն մէկին կամ միւսին :

Կը հաւատան նաեւ կը քարոզեն “ վերատին ծնունդ ” , ինչպէս որ կը սովորիմք Յովն, Գ, 3-5: Ա. Պետ, Ա, 23: Յով, Ա, 18 Ա, Կոր, Դ, 15: Տիտոս Գ, 15: եւ Եբր. Ժ. 22: Եւ թէ Աստուծոյ որդիքը իրենց սրտերուն մէջը ֆրիստոսի հոգին ունին ինչպէս որ կը սովորիմք Հռովմ. Բ, 15: Գաղ. Դ, 6: “ Ան որ ֆրիստոսի հոգին չունի , իրեններէն չէ ” Հռովմ, Բ, 9 :

Անոնք կը հաւատան եւ կը քարոզեն նաեւ յաւիտենական եւ անվերջանալի երանութեան եւ պատժոյ սրդարոց եւ մեղաւորաց : Տես Մատթ. ԻԲ. 46.

Ոմանց մտացը մէջ սա սխալ տպաւորութիւնը մտած է թէ “ Աշակերաները ” թէ թիւով եւ թէ արդեցութեամբ աննշան են , բայց , ընդհակառակը , Աստուծոյ ժողովուրդին մէջ դանուած բաժանման պատերը քակելու , եւ ֆրիստոսի էկեղեցին իւր առաքելական բարեկարգութեանը վերադարձընելու փութացող եւ աղօթող այս ժողովուրդին ներքին զօրութիւնը յայտնի կը տեսնուի հետեւեալ անուրանալի իրողութենէն որ , անցեալ քառասուն տարուան միջոցին մէջ փեց հարիւր հազար հոգի միացած են միայն Աստուածաշունջի ճշմարտութեանը վրայ հիմնեալ , անցեալ մէկ քանի տարիներուն մէջ , տարեկան յիսուս հազարի չափ յարողներ եզան իրենց :

Անոնք ունին նաեւ քսանի չափ համալսարաններ և նոյն չափ ալ կրօնական լրագիրներ Միացեալ Նահանգաց մէջ , բացի Անդրիոյ , Գանատայի եւ Աւստրալիայի մէջ եղածները և իրենց արդեցութիւնը ամենարագ կերպով կը ծառայի աշխարհիս ամէն կողմը :

Չէ թէ իբրեւ անսխալ ապացոյց մը իրենց սկզբանցը յառաջ կը բերեմք այս իրողութիւնները , այլ իբրեւ պատասխան մը անոնց որոնք կրօն թէ այս ժողովուրդը աննշան է եւ մտադրութեան արժանի չէ , նաեւ իբրեւ անուրանալի ապացոյց մը ցուցնելու թէ կրօնական ժողովուրդ մը կրնայ անանիլ եւ զարգանալ Աստուածաշունջէն ուրիշ դաւանութիւն մը չունենալով :

Անոնք արժանի են անկեղծ մտադրութեան , եւ ամէն անոնք որ այս “ Չայն ” կը լսեն եւ կը կարդան , ամենայն պատուով հրաւիրեալ են իրենց ժողովոյն ներկայ գտնուիլ առանց նախապաշարման եւ կամ թէ բարեկամական կամ թշնամական ողիի , որ կարողանան “ Ամէն բան փորձել եւ բարին աճուր բռնել ” : Եթէ Տէր Յիսուս ֆրիստոսի Աւետարանին մէջ յայտնուած ճշմարտութեան համաձայն է իրենց քարոզութիւնը , թող հաւատան անոնց , եւ եթէ հակառակ է թո՛ղ մերժեն , բայց նախ եւ յառաջ թո՛ղ լսեն իրենց ականջներովը անոնց քարոզութիւնը , ինչու որ այս դարուս ֆրիստոսից եւ բոլոր աշխարհի փրկութեանը վերաբերեալ կենսական եւ կարևոր բաներ քարոզելու “ Չայն ” կը բարձրացնեն :

“ Գացէք բոլոր աշխարհ , ու աւետարանը քարոզեցէք բոլոր ստեղծածներուն ” հրամանին հնազանդութեամբ “ ֆրիստոսի Աշակերաները ” Միացեալ Նահանգներէն դուրս օտար երկիրներ նաեւ քարոզիչներ խրկած են ֆրիստոսի Աւետարանը քարոզելու . եւ մ.տ օրերըս նաեւ թիւրքիոյ ժողովուրդը յիշելով , իրենց Աստուածաբանական դպրոցներուն մէջ զաստիարակեալ հայազգի Գեորգ Ն. Շիմանեանը իւր հայրենիքը խրկեցին որ իւր արդին եւ երկրացիներուն Աւետարանին պարզ ճշմարտութիւնները քարոզէ իւր մայրենի լեզուովը եւ բնական կարեկցութեամբը :

Յիշեալ հայազգի միսիօնարը ներկայիս Պօլսոյ մէջ , կուսկայէն վլանկա իջնելու Եկեքեպ փողոցին թիւ 6 տանմէջ ամէն կիրակի օր կէս օրէն մէկ ժամ յառաջ կը քարոզէ , եւ կը հրատարակէ բոլոր ճշմարտութիւնը սիրողները որ բարեհաճին ներկայ գտնուիլ իւր քարոզներուն :

Ամենաբարին Աստուած շնորհէ որ շուտ հասնի այն եր-
ջանիկ ժամանակը երբ բոլոր իր ժողովուրդը պիտի ըլլան
“ մէկ, ինչպէս Քրիստոս եւ Հայրը մէկ են ”, և այլ եւս բա-
ժանումներ պիտի չըլլայ անոնց մէջը, “ ամէնքը մի եւ նոյն
խօսքը ունենան ”, ամէնքը մէկ հօտ եւ մէկ հովիւ Յիսուս
Քրիստոսի սուրբ նստած սուրբին իր կամքը եւ կրեն իր հողին,
է այս գրողին աղօթքը Աստուծոյ սիրովը եւ երկնից յոյսովը :



« Ազգային գրադարան



NL0030164

3136